

ՍՓՅՈՒՌԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՐՔՈՒՄ

(1971 թ. հունվար—հունիս)

ԲՈՒՂԱՐԻԱ

Սոֆիայի պետական համալսարանի արևելագիտության ամբիոնին կից գործում է հայերեն լեզվի ֆակուլտատիվ դասընթաց, որին մասնակցում են հայ և բուլղար ուսանողները։ Հայ լեզվի ծագման և զարգացման մասին դասախոսություններ է կարդում բանասիրական գիտությունների թեկնածու էդուարդ Սելյանը։

«Ջահակիր», 1 ապրիլի

* * *

Բուլղարական «նարոդնա կուլտուրա» հրատարակությունը բուլղարերեն լույս է ընծայել Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը, որը ուսերենից թարգմանել է Թոդոր Լուկանովը։ Գրքի նկարագրողումը կատարել է Վլադիմիր Կոլենսկի։ Հայաստանում ուսանած բանասեր Կարո Հայրապետյանը համոռոտակի ծանոթացնում է Ստ. Զորյանի կյանքին և ստեղծագործական ուղուին։

«Պայքար», 3 ապրիլի

ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինական արևելագետների խումբը, որը մինչև այժմ «Բանասիրական ուսումնասիրությունաց ընկերության» մի քաժինն էր կազմում, կառավարության որոշումով վեր է ածվել ինքնուրույն ընկերության, որի նախագահ է ընտրվել պրոֆ. Զիչերոնս Փոկիրբը։ Վավերացվել է ընկերության կանոնադրությունը։ Ընկերության պատվավոր նախագահ է հռչակվել պրոֆ. Հ. ձ. Սիրունին։

Ընդհանուր ժողովը որոշել է ավելի հաճախ լույս ընծայել ընկերության պարբերական հրատարակությունը՝ «Ստուդիա է Ակտա Օրինետալիա»-ն, ավելի սերտ կապեր հաստատել արևելյան երկրների համապատասխան կազմակերպությունների հետ, զարկ տալ արևելագետների նոր կադրերի պատրաստմանը և արևելյան լեզուների ուսուցմանը Ռումինիայում։

«Ջարթոնք», 30 ապրիլի

ԼԵՀԱՍՏԱՆ

Լեհաստանի պետական հրատարակությունը 1970 թ. վերջերին հրատարակել է «Հին հայկական բանաստեղծությունը» խորագրով գիրք, լեհ բանաստեղծ Անջեյ Մանդայանի նախածնունդով։

Գրքում տեղ են գտել հատվածներ հայկական հնագույն ժողովրդական բանահյուսությունից՝ ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»։ Առանձին գլուխ է հատկացված Մեսրոպ Մաշտոցի, Հովհան Մանդակունու և Ստեփանոս Սյունեցու շարականներին։ Ներկայացված են միջնադարյան հայ գրողներ Գրիգոր Նյարեկացին, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացին, Առաքել Բաղիշեցին, Մկրտիչ Նաղաշը, Հովհաննես Խլկուրանցին, Գրիգոր Աղթամարցին։ Վերջում տասնչորս բանաստեղծությամբ ներկայացված է Սայաթ-Նովան։ Թարգմանությունները կատարել են Լեհաստանի ժամանակակից հինգ լավագույն բանաստեղծները, գրքի նախաբանը և ծանոթագրությունները գրել է Անջեյ Մանդայանը։

«Ջարթոնք», 16 փետրվարի

Գ Դ Հ

Բելուինում հրատարակվել է «Հայաստանը մեր օրերուն» վերնագրով պատկերազարդ ալբոմը։ Այն նվիրված է Հայաստանի ձեռք բերած հաջողություններին 50 տարում։ Պատկերազարդ 17 նյութեր նվիրված են ազգային ճարտարապետությանը, հայկական գիտության ու տեխնիկայի զարգացմանը։

Ալբոմն ընդգրկում է 178 լուսանկարներ, որոնք վկայում են Հայաստանի շինարարության մեծ թափի մասին, պատկերում են պատմական հուշարձանները և հիշարժան վայրերը։

Ալբոմը խմբագրել է հայկական մշակութային և պատմությանը քաջատեղյակ Կենթըր Միթակը, տպագրված է էրֆուրտում։

«Արարատ», 18 հունիսի

ԼԻՐԱՆԱՆ

Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնը լույս ընծայեց «Հայկազյան հայագիտական հանդեսի» առաջին համարը՝ Երվանդ Հ. Քասունիի խմբագրությամբ: Հանդեսում տպագրված են հայոց պատմությանը, գրականությանը, արվեստին ու մշակույթին վերաբերող նյութեր:

«Զարթոնք», 27 փետրվարի

* * *

Լիբանանում փետրվարի 20-ից սկսել է լույս տեսնել լիբանանահայ «Կանչ» շաբաթաթերթը, որի պատասխանատու խմբագիրն է Հարություն Մատեյանը:

«Ջահակիր», 11 մարտի

* * *

Բեյրութի Տոնիկյան տպարանը լույս է ընծայել պրոֆ. Հայկ Արամյանի «Մեծ եղեռնի պատգամ. Հայոց Տանթեական» խորագրով գիրքը՝ բաղկացած 227 էջից: Առանձին գլխում հեղինակը անդրադարձել է մեծ աղետը կանխագուշակող դեպքերին, երկրորդ գլխում նկարագրված են տեղահանությունն ու ջարդը, երրորդ գլխում՝ 1918—1922 թթ. անցքերը: Հեղինակը 1915—1916 թթ. դեպքերի ականատեսներից է:

«Զարթոնք», 19 մարտի

* * *

Լիբանանահայ մտավորականությունը մարտի 25-ին նշել է Հրաչյա Աճառյանի ծննդյան 95-ամյակը: Աճառյանի կյանքի ու գործունեության մասին ղեկուցել է զրոգ ու բանաստեղծ Սիմոն Սիմոնյանը: Այնուհետև իր հուշերն է պատմել մեծ լեզվաբանի աշակերտ, վաստակավոր երգահան Աշոտ Պատմագրյանը:

Ապրիլի 8-ին տեղի է ունեցել երեկո՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակին և մահվան 70-ամյակին:

«Կանչ», 17 ապրիլի

* * *

«Էլ Ճումհուր» արաբերեն շաբաթաթերթը ապրիլի 29-ի իր համարում երկու հոդված է նվիրել արևմտահայության 1915 թ. ցեղասպանության 56-ամյակին: Առաջին հոդվածի հեղինակն է թերթի խմբագիր Ֆարիտ Ապու Շահլան, երկրորդինը՝ թերթի պատասխանատու տնօրեն Մուհամմետ Ռասլան: Այդ հոդվածներից հատվածներ թարգմանաբար տպված են «Զարթոնքում»:

«Զարթոնք», 4 մայիսի

ՈՒՐԻԱ

Լույս է տեսել սիրիացի արաբ մտավորական էտիպ Սայետի «Հայաստանը արաբական պատմության մեջ» գիրքը, որի մասին «Զարթոնքը» գրում է. «...իր տեսակին մեջ առաջին գիրքն է, որ կհրատարակվի արաբներին լեզվով, Հեղինակը յոթ երկար տարիներ աշխատած և պրպտումներ կատարած է, որպեսզի այս գիրքը պատմական փաստաթուղթ մը ըլլա արաբ և հայ փոխհարաբերություններու մասին»:

«Զարթոնք», 30 ապրիլի

Ի Ր Ա Ն

Պարսկահայ դպրոցների մասին «Նոր օրը» թղթակցություն է տպել, որից տեղեկանում ենք, որ ներկայումս Թեհրանում կան տղաների և աղջիկների ազգային 4 միջնակարգ դպրոցներ: Այս տարի բացվել է նաև երկսեռ միջնակարգ դպրոց:

Թեհրանի և շրջանի 16 ազգային դպրոցները, 1969—1970 ուսումնական տարվա ընթացքում ունեցել են 10242 աշակերտ: Կան նաև աշակերտներ, որոնք հաճախում են պետական և մասնավոր դպրոցների: Թեհրանի շուրջ 100 հազար հայության մեկ չորրորդը դպրոցականներ են:

Պարսկահայ դպրոցների տնտեսական, ուսումնական և վարչական աշխատանքները վարում են Թեհրանի ժՀայոց դպրոցներու կեդրոնական վարչությունը, ինչպես նաև դպրոցների հոգաբարձական մարմինները: Բյուջեն գոյանում է աշակերտների վճարումներով և նվիրատվություններով: Կան նաև աշակերտներ, որոնք ձրի են ուսանում:

«Նոր օր», 16 մարտի

* * *

Պարսկաստանի, Լիբանանի, Հարավային Ամերիկայի և Ֆրանսիայի տասը սփյուռքահայ բանաստեղծների դործերից պարսկերեն է թարգմանել Հրանդ Ղուկասյանը:

Թարգմանությունները կատարված են Դևի, Արշիի, Աշոտ Ասլանի, Գալուստ Խանենցի, Արշավիր Մկրտչի, Արմանտի, Գառնիկ Աղդարյանի, Ալիսիա Կիրակոսյանի, Շառլ Աղնավուրի, Շահանդուխտի ստեղծագործություններից: Հատորը կրում է «Կոունկ» խորագիրը:

«Նոր օր», 14 մայիսի

ԹՈՒՐԳԻԱ

Պոլսում սկսել է լույս տեսնել նոր շաբաթաթերթ «Նոր դար» անունով, որի առաջին համարը լույս է տեսել ապրիլի 7-ին:

«Ջահակիր», 6 մայիսի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Կրետե կղզում հայ բնակչություն հաստատվել է դեռևս հին դարերում: Մինչև այսօր

էլ կողում կան հայկական անուն կրող գյուղեր և քաղաքներ, ինչպես օրինակ՝ «Արմենոս» և «Արմենոսորի» և այլն:

Ներկայումս, ինչպես հայտնում է «Լրաբերը», խիստ նվազել է կրետահայերի թիվը. նրանք մոտ 100 հոգի են, զրեթե բոլորն էլ կենտրոնացած Կրետեի գլխավոր քաղաքում՝ Իրաքլիոնում:

Այս փոքրիկ գաղութն ունի իր թաղական խորհուրդը, գործում է Հայկական բարեգործական ընդհանուր միության Բրաքլիոնի մասնաճյուղը: Վերջերս գաղութում կազմակերպվել է նաև կրթական խորհուրդ, որը իր գործունեությունը սկսել է 1970 թ. դեկտեմբերից, կազմակերպելով հայոց լեզվի դասընթացներ: Գաղութն ունի եկեղեցի և դպրոց:

«Լրաբեր», 20 մարտի

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանում անդլերենով լույս տեսնող «Տը Իլլըսթրեյթըտ Ուիքլի աֆ Ինտիա» շաբաթաթերթը իր վերջին համարներից մեկում տրպադրել է հնդկահայ գաղթօջախի հայտնի մտավորական Մարտին Բադիլի «Հայերը Հնդկաստանում» հոդվածը (ծավալը՝ վեց էջ):

Հոդվածը սեղմ կերպով ընթերցողին ծանոթացնում է հնդկահայ գաղթօջախի պատմությանը:

«Պայքար», 14 ապրիլի

ՄԱՐՈՒԿՈ

1958 թ. Մարտիկոյում բնակվել են շուրջ 200 հայեր, այժմ հայերի թիվը խիստ նվազել է. Կասարլանկայում մնացել է ընդամենը 4—5 ընտանիք:

«Պայքար», 19 փետրվարի

ՖՐԱՆՍԻԱ

Պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին կազմել է հայոց լեզվի դասագիրք, որը բաղկացած է բառասունչորս դասից: Գիրքը նախատեսված է Հայաստանում հայերեն սովորել ցանկացող օտար ուսանողների համար:

«Ջահակիր», 1 ապրիլի

* * *

Ֆրանսիայում լույս է տեսել չքեղ հրատարակությամբ հատոր՝ նվիրված Գաղութին՝ Ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով: Առաջարանը գրել է Ռոժե Քայուան Ֆրանսիական Ակադեմիայից: Գիրքը բաղկացած է 216 էջից. 5200 տպաքանակով, ունի բաղմաթիվ գունավոր վերարտադրություններ և երեք վիճագրություններ:

«Պայքար», 25 հունիսի

ԱՆԳԼԻԱ

Անգլիական «Դը Գարտիք» օրաթերթի թղթակից Տեյվիտ Հրոսթը թերթի ապրիլի 26-ի համարում տպագրել է «Դեպի ցեղասպանություն և վերապրում» խորագրով հոդվածը, որը թարգմանաբար ներկայացնում է «Զարթոնք» հոդվածը վերաբերում է հայկական կոտորածներին և լիրանահայության արդի վիճակին:

«Զարթոնք», 20 մայիսի

ԻՏԱԼԻԱ

Հռոմի համալսարանի արվեստի պատմության բաժինը հրատարակում է Թուրքիայում գտնվող հայկական հուշարձանների ցանկ, որ կազմել են 1969-ին այդ հուշարձաններն այցելած Քաոլո Քուենոն, Թոմադո Պրեշչիա Ֆրաթտոքին, էօթինիո Մոնտին:

«Արև», 1970, 25 օգոստոսի

ՀՈՒԱՆԴԻԱ

Ամստերդամում ցուցադրվել են հայկական երեք կինոնկարներ՝ «Տժվժիկը», «Էրեբունի—Երևանը» և Գոհար Գասպարյանին նվիրված նկարը:

«Պայքար», 19 փետրվարի

Կ Ո Ւ Բ Ա

Հավանաբար բացվել է Խորհրդային Հայաստանի 50-ամյակին նվիրված ցուցահանդես, որը ծանոթացնում է հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի ու դիտության բնագավառներում ձեռք բերված նվաճումների հետ:

Ցուցահանդեսը կազմակերպել են սովետական դրամայական բարեկամության միությունը և ժողովուրդների բարեկամության կուրայի ինստիտուտը:

«Աշխարհ», 16 հունվարի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Բուենոս-Այրեսում ակադեմիկոսի կոչման են ընդունվել մի շարք գիտնականների: Այդ բարձր կոչմանն արժանացածների թվում է բիրթիմիայի դոկտոր Մաթևոս Շխրտմյանը, որը Արգենտինայի առաջին հայ ակադեմիկոսն է:

«Ջահակիր», 29 ապրիլի

* * *

Բուենոս-Այրեսում իսպաներեն լեզվով լույս է տեսել «Քուլթուրա Արմենիա» («Հայկական մշակույթ») գիրքը, որի հեղինակն է հրապարակագիր Ռոդա Փառանձեմ Մախյանը: Գիրքը բաղկացած է 140 էջից: Ամփոփ տեղեկություններ են տրված հայ դրականության, բանաստեղծության, ճարտարապետության, աղջային մշակույթի մասին:

«Լրաբեր», 15 մայիսի

ԿԱՆԱԳԻՒ

Տորոնտոյի Քեքեյան մշակութային միութիւնը հաջողօքն է կազմակերպել «Քեքեյան ձայն» հայկական ռադիոժամ՝ հայ մշակութային օտարներին ծանոթացնելու համար:

«Քեքեյան ձայնի» առաջին հաղորդումը՝ նվիրված Կոմիտասին, տեղի է ունեցել հունվարի 23-ին:

«Պայքար», 6 փետրվարի

ԻԼՒՆ

Լոս-Անջելեսում սկսել է լույս տեսնել նոր հայկական պատկերազարդ շաբաթաթերթ՝ անգլերեն լեզվով՝ «The Armenian Observer», որը էջ ծավալով: Այն լուսարանն է հայ կյանքին վերաբերող հարցեր:

«Նոր օր», 1970, 25 դեկտեմբերի

• • •

Վերջերս Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության շենքում հիմնվել է հայկական գրադարան, որտեղ հավաքվել է հայերեն գրքերի ընտիր ժողովածու: Գրադարանը հիմնվել է քարտուղարության հայ անդամների կողմից: Գրադարանի բացման մասին եղել է պաշտոնական հաղորդագրություն ՄԱԿ-ի քարտուղարության պաշտոնական ծանուցաթերթիկում:

«Ջահակիր», 29 ապրիլի

• • •

Քեքեյան մշակութային միության նորակազմ մասնաճյուղի նախաձեռնությամբ, ապրիլի 24-ից Սան-Ֆրանցիսկոյում բացվել է հայկական նոր ռադիոժամ: Այսուհետև այն պետք է շարունակվի ամեն շաբաթ օր, առավոտյան, Քեքեյան ձայն անունով:

Ռադիոյի հաղորդումներում հայ և օտար ունենդիրների համար տրվելու են հայկական երգ ու նվագ, դրական գրույցներ, մշակութային յուրեր և հյուր եկած արվեստագետների ելույթներ:

«Ջարթոնք», 6 մայիսի

• • •

Նյու-Յորքում լույս է տեսել Օնիկ Սինանյանի «Այս ազգը ծնած շեր փհանալու համար» գիրքը անգլերեն, 247 էջից բաղկացած:

Գրքի մասին «Պայքար»-ում տպված է Վահրամ Կեռքճյանի գրախոսությունը, որից տեղեկանում ենք, որ այն նվիրված է Կիլիկիայի ազատագրական պայքարի 1918—1921 թթ. շորջանին:

«Պայքար», 16—17 հունիսի

ԻԼՒՍՏՐԱԿԻ

Մելրուոնի հայ եկեղեցու երիտասարդական կազմակերպության ջանքերով վերջերս լույս է տեսել ամստրալահայ գաղթօղախի առաջին հայ երիտասարդական պարբերաթերթի՝ «Ակնոցի» անդրանիկ համարը, որի պատասխանատուներն են Նաիրի Պողադյանը և Նուպար Ափաքյանը:

Թերթի առաջին համարից տեղեկանում ենք, որ 1970 թ. դեկտեմբերի 2-ին Մելրուոնում կազմակերպվել է հայ եկեղեցու երիտասարդաց կազմակերպության հանձնախումբ: Թերթի աշխատանքներին մասնակցում են, առանց տարիքի սահմանափակման, բոլոր ներանք, ովքեր ցանկանում են «հայ պահել» պագա սերունդը: Թերթի էջերում տեղ են գտել մելրուոնահայ երիտասարդության կյանքին վերաբերող նյութեր:

«Ջահակիր», 6 մայիսի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ